

խառում, որպէսզի «հաւուր չլինեն», այսինքն երեկոները բոլորովին կամ վատ չտեսնեն».

Ժաղկւածք հուքմի.—Համարձեան չորեքշաբթի օրը առաւելագլխ կանայր են պահում, որպէսզի երեխաները «ծաղիկ չհանեն» — ծաղիկ հիւանդութեամբ չբռնուին:

Սոսորտար քահանաները և ծերերը հսկում են, որ բոլոր դիպացիներն էլ կիրակի և տօն օրերը չաշխատեն: Զատանդամ ամրան տշխատանքների ժամանակ քահանան և տանուտէրը մարդ են ուղարկում հանդերը, որ տեսնին, թէ աշխատողներ կան: Յանցաւորներին տանուտէրը մի օր բանտարկում է և մի բուրլի տուգանքի ենթարկում:

ՈՒԽՏԱՆԵՆԵՑՈՒԹԻՒՆ

Գիւղական խաղաղ և միակերպ կեանքի մէջ ուխտագնացութիւնը մի տեսակ փոփոխութիւն է ձգում և թարմացնում, կողգուրում: Երբ մօտենում են ուխտագնացութեան օրերը, գերդաստանի մէջ մի առանձին տրամադրութիւն է սկսում տիրապետել: Հարսներն ու աղջիկները, ինչպէս և երիտասարդները — զարգարուելու, կոկուելու տենչով բռնուած՝ ստիպում են իրանց ամուսնիւններին և ծնողներին նոր հանդերձներ, կօշիկներ առնելու: Գերդաստանի մեծն էլ, կարծես այս օրերում, առատաձեւն է դառնում և փոքր ինչ բաց անում ընդհանուր քսակի սյնքան սեղմուած բերանը: Սակայն որովհետեւ բոլորին բաւականութիւն չի տրւում, ուստի դժգոհութիւնը, արցունքը, բամբասանքն ու զրպարտութիւնն սկսում են թունաւորել այն հոգեկան մեծ բաւականութիւնը՝ որ ստանալու են այդ ուխտագնացութիւնից:

Վերջապէս այդ երջանկութեան վերջնութիւն օրը տանտիկինը հարսների հետ լուացք է անում, հաց, զաթայ, բալլարջ թխում, պաշարեղէնը կապում, պատրաստում: Նախօրեակին մօտիկ բարեկամները միասին խմբիկ կազմած կառքելով ու ձիերով դիմում են դէպի ուխտատեղին — Վարդարուրի Ս.

Գրականագէտ Ե. Ս. Երանցեանի մատնանքը: Գրք. Երանցեան

Սարգիս, Օձունի Ս. Նշան, Հաղբատ, Սանահին, Ըրզուի Ս. Օհան և այլն:

Չառ գիւղերում կառքեր, սայլեր չը լինելու պատճառով, մեծամասնութիւնը հետի է գնում, միայն երիտասարդները և կանայք ու աղջիկներ՝ ձիով. առաջիններն իրենց ձի քշելու, ջիւրիթ խաղալու շնորհքը ցոյց տալու, երկրորդները՝ իրենց հարուստ լինելն ապացուցանելու: Կանայք տղամարդկանց նըման են ձի նստում—թամբն առնում իրենց երկու ոտների մէջ, Գրեթէ բոլորն էլ շատ վարժ են լինում, որովհետեւ հէնց 7—8 տարեկան հասակից խոտ, հունձ կրելով՝ վաւժում են: Սակայն շատ քշերին է վիճակում միայնակ մի ձի նստել, սովորաբար 3—4 հոգուն մի ձի է ընկնում և սրանք այսպէս են օգտւում. տարիքովը նստում է թամբի վրայ, երեսային առնում գիրկը, աղջկանը՝ կամ հարսին՝ գաւակը, իսկ միւս տարիքաւոր կիներ ձիու պոչից բռնած գնում է, ձին նրան քաշում է. երբ յոգնում է, ինքն է նստում ձին և առաջին նստողը՝ նոյն կերպ քայլում. Եթէ ձին չար է կամ հեծնողները անվարժ, մի տղամարդ ձիու սանձից բռնած քաշում է:

Երբ հասնում են ուխտատեղին, մի ծառի տակ իջնում, բակեղաթները վայր առնում, ձին մի տեղ կապում արածելու, և մէկին պահապան թողնելով իրերի և ձիու մօտ՝ շտապում են ուխտատեղին, առնելով իրենց հետ բերած մոմերը:

Ուխտատեղու դուռը, խաչարձանը, պատկերը մի քանի անգամ ցիւրմեռանդութեամբ համբուրելուց յետոյ՝ վառում են մոմերը և աշխատում կպցնել որքան կարելի է մօտ՝ խաչքարի, պատկերի վրայ, որից և սրանք փշանում են: Յետոյ մի քանի անգամ երկրպագում և ապա չորած, գրեթէ լսելի ձայնով շշջում:

Ով (այս անուն սուրբ), երեսոս ոտիդ տակը, դու իմ բալնու (փոքրերի) ռուղը (պարէնը) հասցնես. դու սրանք արեւատութիւն ու սաղ ջան տաս. դու հանդ ու հանդաստանը ցատումից ազատես, աշխարհքին առատութիւն տաս. դու ամէն նեղացածի փրկես, ազատես. նրանց սաղաղին էլ մեղ: Մեկայ քեզ, Տէր, անարժան մեղաւոր եմ, դու քո ստեղծածը

չի կորցնեն. դու իմ մեղաւոր հոգուն մի լիս ու ճար անես. արքայութենից մասն ու բաժին տաս. դու չի դուշմանի սրբաւով անես, նամարտի մոհտաջ. քու լիս երեսին դուրբան, քու լիս տաճարին դուրբան, դու քաղցր աշքով մտիկ անես իմ տանն ու տեղին, իմ տիրոջը (ամուսնուն). դու շառից ու փորձանքից ազատես. անդարձին դարձ տաս. շարը կործանես, բարին առաջացնես. Դու մեր հոգն ու ջուրը պտղացնես, ազար բէզարը հեռացնես. աշխարհքի ռուզղը շատացնես, թագաւորի սիրտը կակղացնես, կարկուտը կորցնես. ձինն ու անձրեր առատացնես, աշխարհին հանդարտութիւն տաս, մինձերին հաշտութիւն տաս, հիւանդներին սաղութիւն տաս...

Դեռ աղօթքը չը վերջացրած՝ քահանան կամ տիրացուն պոկում են վառած մամբը և տալիս երեցփոխին նորից վաճառելու, ու ձայն տալիս աղօթողներին, որ դուրս գան, նոր եկողներին էլ տեղ լինի:

Սկսում են դուրս գալ և խմբուել ուխտատեղուն կից բարձրացած հինաւուրց, սուրբ համարուած ծառերի և խաչքարերի շուրջը: Այստեղ շատերը պատառում են իրենց հանդերձներից մի մի կտոր և կապում ծառի հիւղերից, որպէսզի իրենց ցաւերն էլ այդ շտերի հետ կապուած մնան այդտեղ և այլևս չը նեղացնեն իրենց: Ոմանք էլ բամբակէ թելերի շարաններ, ծայրերը մեղրամոմով ամրացրած՝ բերում և նոյն հաւատով կապում են ծառի հիւղերից: Աւելի ջերմոռանդները իրենց ծամերն են կտրում և կապում ծառերին:

Հիւանդոտ կանայք վղերից հանում են երկաթեայ մանեակները, որ «խաչի սիրուն» կրել են ամբողջ մի տարի և կախում ծառից կամ դնում խաչարձանի առաջ. ուրիշներ էլ մարդակերպ, կամ ոտի, ձեռքի նմանութեամբ երկաթէ շինուածքներ են դնում խաչարձանի առաջ, որպէսզի իրենց հիւանդութիւնները այդ արձանների մէջ ամփոփուած մնան այնտեղ և ազատ թողնեն իրենց:

Ամուլ կանայք ծառերի հիւղերից ճօճք են ձգում և երկխայի մի տիկնիկ դնում մէջը, որպէսզի երեսայ ունենան:

Այլք երեխայի ծաղիկ հանած ժամանակ նոր կարուած

ու հազցրած շաղկեր հանում են և կախում ծառից, որպէս-
զի ծաղիկը չը կրկնուի:

Սակայն կանայք չեն բաւականանում միայն իրենց իզ-
ձերը սրբին յայտնելով, այլ և ցանկանում են իմանալ, թէ
արդեօր կատարուելու են, թէ՛ ոչ: Նուազկոտ կանայք, ինչպէս
Գուրթանեցի Անուշը, այլևս չեն լինում, քահանաները և նոր
սերունդը հալածում է նրանց, այնպէս որ կանայք զրկուած
են այդ Պիլթեան քրմուհիներից, ուստի և քարի կտոր են
վերցնում և խաչարձանի, սեղանի բեմի վրայ քսում. եթէ
կաշում է՝ այդ նշան է, որ սուրբը կատարելու է նրանց ուխտը:

Ուխտատեղուց բազմութիւնը կամաց կամաց իջնում է
դէպի մրգավաճառների և մանրավաճառների շարքերը, և ա-
հագին թաշկինակներով ծանրաբեռնուած բաշում դէպի ի-
րենց իջած տեղերը: Իսկոյն կանաչ խոտի վրայ սփռւում է
նոյնպէս կանաչագոյն սփռոցները և սկսում է կեր ու խումբ,
երգն ու պարը, որ տեսւմ են մինչև կէս գիշերը: Նուազածու-
ների խումբը ակումբից ակումբ տնցնելով՝ աւելի ու աւելի
զօրեղացնում է ուրախութիւնը:

Խմիչքների ազդեցութիւնից տաքացած գլուխները ահա-
գին ազմուկ են բարձրացնում, դաշոյնն ու ատրճանակները
ձեռներին պարում և «ուռա»-ի աղաղակով արձակում:

Աւելի ճարպիկներն այս մթութեան մէջ տրնում են սի-
րային տեսարաններ սարքել, իսկ աւելի ընշարագները աշխա-
տում են սրանից նրանից մի բան թագնել (զօգանալ): Բայց
երբ մէկը կամ միւսը բացւում է, սկսում է տուր ու դմարցը,
որ երբեմն մեծանալով՝ զոհեր է տալու:

Վերջապէս՝ յաղեցած ու յոգնած՝ խոտերի վրայ ընկնում
քնում են 3—4 ժամ:

Վաղ արշալոյսին սկսում են մատաղ կտրել: Բազմութիւ
զառներ ու ոչխարներ զոհում են. դրում են ահագին կաթ-
ոսանքը, որոնց մեծ մասը ուխտատեղին կառավարող երեց-
փոխն է մատակարարում, և սկսում է «մատաղի» պատրաստու-
թիւնը:

Հետզհետէ մատակարարից նոր ուխտաւորներ են գալիս

խմբերով և սրանց հետ միացած մտնում ուխտատեղին համարում, ուխտ անում, վերադառնում, կրկին սփռոցները սփռում, «մատաղ»-ը, արինոտ խորովածի հետ ուտում, մի լաւ կոնծում, երգում, պարում և շտապով վերադառնում տուն, ճանապարհին մի երկու տեղ կրկին հաց ուտելով, թէյ խմելով ու շարունակ կոնծելով:

Մինչև կէս օր բոլոր ուխտաւորներն արդէն քաշուած են լինում, մեում են միայն քահանաները, որ իրենց ստացած մատաղացունքի մորթիներն ու էրիները (աջ ոտը) բարձում են ձիերի վրայ կամ տեղն ու տեղը ծախում և վերադառնում:

ԿԱՆԵՐԴՈՒԹԻՒՆ

Կախարդութիւնը Լօռում ևս բաւական տարածուած է, այստեղ էլ գրանով պարապում են թէ տղամարդիկ և թե կանայք: Տղամարդիկ գործում են առաւելապէս «Վեցհաղորեայ» «Ախթարը», «Հաւախօտ» և այլ ձեռագիր գրքերի ցուցմունքով, ուստի և սրանց մասին մենք մանրամասն կը խօսենք, երբ բողոք կունենանք շատ դատաւներից կախարդութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելուց յետոյ այդ արուեստի զարգացման մասին մի ընդհանուր տեսութիւն անել, քննելով նաև վերոյիշեալ ձեռագիրները:

Կանանց մէջ տարածուած կախարդութիւնը աւելի ըսկզրնական և աւելի ընդհանրացած է, նա յաջորդաբար աւանդուել է առանց գրաւոր մի յիշատակարանի և սրա մէջ պահպանուած են նախնի գրեթէ բոլոր տեսակի հմայութիւնների (орниѳомантия, ornifomancie), մեռելահմայութեան (Necromancie) մնացորդները:

Հաւամայութիւն.— Թռչուններից ծիծեռնակը, աղանիւն, կաշաղակն ընդհանրապէս համարում են բարեգուշակ, իսկ բուն, աղաւթ՝ չարագուշակ: Բացի սրանից՝ գուշակութիւններ են անում նայելով թռչունների ա) գտնուած տեղին, ը) հանած ձայնին և զ) կատարած գործողութեան. Այսպէս՝